Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ ԹԻՎ 150-Ա, 151-Ն, 152-Ա-170-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 159-Ա և 161-Ա որոշումների նախաբաններում բաժնի անվանումը թերի է գրառված: Թիվ 159-Ա որոշման նախաբանում «հիմք ընդունելով» բառերից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի», իսկ թիվ 161-Ա որոշման նախաբանում՝ «հիմք ընդունելով Հայատանի Հանրապետության» բառերից հետո ավելացնել «Շիրակի մարզի» բառերը:

Թիվ 163-Ա որոշման մեջ նշված չեն ուղղակի վաճառքի միջոցով օտարվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ):

Թիվ 164-Ա որոշման նախաբանում հղումը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներին կիսատ է գրառված, բացի այդ որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրեքնի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին:

Թիվ 166-Ա որոշման 3-րդ, թիվ թիվ 167-Ա, 168-Ա որոշումների 2-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրեքնի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին:

Թիվ թիվ 150-Ա, 151-Ն, 152-Ա-170-Ա որոշումներում առկա վավերապայմանները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, մասնավորապես որոշումներում գրառված «Համայնքի ղեկավար Սամվել Բալասանյան» բառերի փոխարեն անհրաժեշտ է գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Ս. Բալասանյան»:

06.11.2020թ.